

# ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՇԱԲԱԹ, 26 ՄԱՅԻՍ 1906, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

## ՀՈԳԵՎԱՐՔԻ ՀՈՆԴԻՒՆՆԵՐ

(Գահիրէն ստացած ենք հեռակետչ շահեկան նա-  
մակը զոր կը փութանք մեր ընթերցողներուն հագորդել,  
երաշխատորիով մէջի պատճառով իրադաժիւններու ըս-  
տուգութիւնը:

Գահիրէ, 22 Մայիս.

Վե՛հմ. Պօղոս փաշայի հետ մօտէն յարաբերութիւն  
ունեցող արժանահաւատ անձնատրութենէ մը իմացայ  
հետեւեալը.

Բարթոպեան խմբակը իր կրած՝ ամօթալի պար-  
տութենէն պահ մը շփոթած և յուսահատած մնալէ ետ-  
քը, վերջին գերագոյն ճիգ մը ընել փորձած է Սահ-  
մանադրութեան գործադրութիւնը Աղեքսանդրիոյ մէջ ար-  
գիլելու համար:

Վե՛հմ. Բարթոպ փաշոյ, զինքը շրջապատող բանի  
մը հացկատակ պնակալէներու խորհրդին վրայ, հեռու  
գիր մը կ'ուզէ Օրմանեան պատրիարքին և կը բողոքէ  
Ընտրողական Ժողովին զե՛մ ըսելով որ այդ Ժողովն  
զորս ձգուած են հրամարեցուցուած խնամակարութեան

անգամները : (1)

Օրմանեան պատրիարք այդ հեռագրին վրայ երեք հեռագիր ուղղած է հաս, մին Բարձույ փաշային՝ որուն մէջ իրաւացի գտած է բնորոշ և Ընտրողական ժողովը ջնջուած!! յայտարարած է, երկրորդ մը Գեր. Առաջնորդ Հօր որուն մէջ նմանապէս ջնջուած յայտարարած է Ընտրողական ժողովը և զատուցարած է!!! Բարձույ փաշայի զեմ եղած ժողովրդական ցոյցերը և երրորդ հեռագիր մըն ալ գրելած է վսեմ. Պօղոս փաշային որուն մէջ կը խնդրէ Ն. վսեմութիւնն որ Ազեքսանդրիոյ Ընտրողական ժողովը չեղեալ համարելով, ինք իր կողմէ Ընտրողական ժողովի համար անձեր նշարակէ :

վսեմ. Բարձույ փաշա հեռագիրը անեղուն պէն յազմական կը դիմէ տեղոյ կատարչին որ իրին կը հասկնէ թէ ամէն ինչ օրինաորակա կատարուած է և թէ պատրիարքական հեռագիրը որ և է կերպով չիրնար խանգարել սխտած ընտրողական գործուած թիւները : Այս պատասխանը կ'երևայ թէ պսպ ջուրի տուչ մը եղած է ինչո՞՞ հողիատակներն համար որոնք փառաւոր չախ մըն ալ լսած են Բարձույ փաշայէն, զինքը անգամ մըն ալ պատիկ ձգելու պատճառ ըլլալուն համար :

Միւս կողմէ վսեմ. Պօղոս փաշա հեռագրով պատասխանած է Օրմանեանին թէ ինք մօտէն կը ճանչնայ

1) Ծ. Խ. — Ինչ որ բոլորովին անճշտ է. Ընտրողական ժողովի նախագահ Տ. Ռոբէն քահանան հրաւեր ուղղած է իննամակալութեան անգամներն սակայն իրենք մերժած են գալստ :

Ընտրողական Ժողովի անդամները և թէ՛ ամէնքն ալ պատաստար և արևանաւոր անձնաւորութիւններ են և թէ՛ ինք բիշ օրէն Եւրոպա մեկնելուն համար չիրնար բզրայիչ Աղեքսանդրիոյ տեղական աղգային գործերով Բաց աստի նորին վսեմութիւնը հեռագրով Գահիրէ կը հրաւիրէ Գեր. Առաջնորդ Հայրը և խորհուրդ կուտայ սխառած ընտրողական գործողութիւնը առաջ տանիլ, առանց կարեւորութիւն ընծայելու Օրմանեանի հետագիւրներուն :

Չեմ գիտեր թէ՛ սակաւին ինչ ազատ միջոցներու պիտի գիտօի Սա՛մանագրութեան գործադրութիւնը արգիլելու համար, սակայն վստահօրէն կրնամ ըսել որ եզրկատական կառավարութիւնը ԱՐՈՇԱԾ և Սահմանադրութիւնը գործադրել տալ :

Օրմանեան պատրիարք իր այլ հեռագիրները սղուելով անշո՛շտ ո՛ր զած և թէ՛ հաճելի բլլալ Բարթոլոմէոս փաշային և թէ՛ Սոլիմանին. որովհետև, հա՛րկ և քնցանքի սա՛ կէտը թէ՛ Աղեքսանդրիոյ յէջ Սահմանագրութեան անգործադրելի մնալը, Պոսէն բղխած հրամաններու վրայ, պարզապէս ենթադրել կուտայ թէ՛ Եզրկատ թրքական նահանգ մըն է, ինչ որ շատ համաձայն է համառօտիան յատկութեանց, մինչպէս բոլորովին հակառակ եզրկատման կառավարութեան և զայն հովանաւորող պետութեան հայեցակէտին :

Ահա՛ թէ՛ ինչո՛ւ համար Բորթոլոմէոս խմբա՛ր, ջանալով ամէն ապօրինի միջոցներով հակառակիչ Սահմանագրութեան գործադրութեանը, պիտակից կամ տնկի-

տակից գործիք մը կ'ըլլայ Օրմանեանի և խաբբ կառու-  
 վարութեան ձեռքը :

Այս է բացատրութիւնը այն կարեւոր խեղճ զար-  
 ճիւղակիան լուսամիտ կառավարութիւնը բնծայեց Սահ-  
 ժանդարական պայքարին և ամէն օրմանդակութիւնն նախ-  
 քեց ժողովրդեան պահանջումներուն պահպանման առջա-  
 ժարը : Ք. Վ.

### ՅԱՆԿԵՐԸ

Ցանկերու շարքին է այս շարքերը, ամէն մարդ  
 իր ցանկը ունի, ամէն մարդ իր բնութելիները, ֆանի  
 մը մեծ կուսակցութիւններէ և բառթիւներէ գառլ կան  
 նաև փոքրիկ, աննշան խմբակներ, որոնք գործի վրայ են :  
 Այս բնդհանուր եռանդը անշուշտ գովելի է և իրատ օ-  
 բինաւոր պոլէն սահմանադրական ժողովրդի մէջ :

Միայն թէ հանրային օգուար նկատի ունեցող և  
 միայն անոր համար պայքարող մեծամասնութեան ջոլ  
 կան նաև, ինչպէս ամէն տեղ, կարգ մը բարոյազոյրկ  
 արարածներ որոնք մէջտեղ ինկած են առ կամ ան կող-  
 մէն քանի մը ոսկի շորթելու նպատակով : Այսպիսիները  
 բացէ ի բաց աճուրդի զբած են իրենց քուէները և պա-  
 րաստ են առաւելագոյն վճարողին աւլ, ստանց խորհե-  
 լու թէ ասկէ կրնան փութաւիլ ազգային հաստատու-  
 թիւնները : Նոյնիօկ մէջերնին կան այնպիսի անձեր որ  
 չպիտի վարանին քանի մը ոսկիի փոխարէն քուէին  
 Բարթօզ փաշայի տալու :

Ի պատիւ Ալեքսանդրիոյ հայ գաղութին ըսենք

«ակայն որ այդ բախտախնդիրները շատ շնչին թիւ մը կը կազմեն և թէ իրենց ծախու հանած քուէները արհամարհանքով կը մերժուին ամէն կողմէ:

Կը լսենք թէ Տ. Սմբատ Բիրբատ ևս գործի վրայ ելած է վերջին ժամուն, երբ ամէն յայտ կորսնցուցած է, սլաարիարքական հեռագիրներուն խայտառակմամբը: Նոյնիսկ քանի կը հոգիներ հաւաքեր է գիշեր մը, Բիրբատի սրճարանին մէկ մուտք անկիւնը և հոն խնամակար կտեան երեքամեայ գործունէութեան ներքոյը հիւսել վերջ, կրցեր է քաջութիւնը անենալ, սիսոր քաջութիւն արդարեւ, Բարթոյ փաշան ընտրելի առաջարկել գաւառական երեսփոխանական ժողովին:

Բարթոյ փաշայի մը փաստարանը Սմբատ Բիրբատ մը կրնար ըլլալ միայն:

### ՆՈՐՈՐԻՆԱԿ ՎԵՂԱԺՈՂՈՎ ՄԸ

Լոնսան, էքսքլիթըր հօլի մէջ վերջերս տեղի ունեցած է հետաքրքրական քննարկ մը, այն է մարգարէնեբու քննարկ: Կ'ըսուի թէ շատ բազմաթիւ էին ներկաները և շահեկան ինչիւրներ յուզած են:

Նախ և առաջ գրեթէ միաձայնութեամբ որոշուած տուին թէ 1929 մայիս 2ին աշխարհի վերջը պիտի ըլլայ: Միաձայնութիւնը սակայն կատարեալ չէր և փոքրամասնութիւն մը մարգարէացաւ թէ 1931 ապրիլ 9ին պիտի ըլլայ վերջնաշխարհը: Դ՛այց ուրիշ երկրորդական

խնդիրներու մասին բռնկրէի անգամները լաւագոյն կերպով համաձայնեցան :

Այսպէս, օրինակի համար, մարդաբեւոյն թէ եօթը ութը տարիէն, Եւրոպա տասը զաշնակից թուցաւորութեանց մէջ պիտի բաժնուի և թէ Նիտր կամ հակաբարբոստար պիտի գայ: Այս մարդը, որ նախասահմանեալ նարօլան անունը պիտի կրէ, աշխարհի մէջ իր մտքով պիտի ընէ «Թագաւոր Ս» ընդ այնուհետեւ սակ: Նախ և առաջ Տրանսա պիտի մտնէ, որուն պիտի տրիք, յետոյ իր իշխանութիւնը պիտի տարածէ մնացած ինը թագաւորութեանց վրայ և ինքզինքը իբր Աստուած պաշտեց պիտի սայ, որիկ առաջ պիտի գայ նոր կրօնք մը :

### ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ԱՂԱՍԻԻ

ՆԱԵԿԻՆ ՊԵՏ ԵՒ ԱՅԺՄ ՀԵՂԻՆԱԼԷ  
«ՁԵՅԹՈՒՆԻ ՀԵՐՈՍՆԵՐ»ՈՒՆ

Ամենախորին ցաւով ստացանք Ձեյթունի մանօթ հերոսներէն Աղասիի «Ձեյթունի Հերոսները» խորագրով դիւցադնեղութիւնը, հինգ արարած, եօթը պատեր, զրուած 1900ին և դժբախտաբար ի լոյս ընծայուած այս տարւոյս մէջ Գահիրէի «Սրինք» խորհրդաւոր տպարանէն, ի գին 1 Քր. 50 ս.ի :

Ինչո՞ւ, ո՞վ Աղասի, գործեցիր հինգ մահացու մեղքերը զորս գրող մը կրնայ կրթել, գործել, խօսելու համար «Անահիտ»ի մեծանուն տնօրէնին պէս: Ա. Ինչո՞ւ յղացար այսպիսի երկ մը որ այնքան հերոսաբար կ'ըս

պաննէ հայ գրականութիւնն, արուեստն ու լեզուն.....  
 մ. յղանակէք վերջը, ինչո՞ւ ՚ի գործ գրիր զայն, սագի  
 ուղեղով մը եւ եւս տառելչ սագի ֆետուր. պիշով մը  
 զինուած. Կ. եւ եթէ գրեցիր, ընդէ՞ր չի պահեցիր  
 հոն ներդաստիւ եւ քարերսօք մթութեան մը մէջ ու  
 մամուլին տուիր զայն իբրև մտքիդ հէզ վիժեալ զա-  
 ւակը անտօք Մողոքի մը ողջակէզ..... եւ, ո՞վ գերա-  
 գոյն յիմարութիւն, զիա՞րդ տարտրելէ ետքը զայն հը-  
 րապարակ հանեցիր, իմարտն ու աններելի մեղք մը  
 հրապարակաւ խոստովանելու պէտ եւ ի՞նչ կ'ուզէիր  
 խնձ կիլիկեան հերոսներէն, Տաջուուզցի անմահն նե-  
 րսա ձեզլատէն—Կարապետ Ղըրիկեանստան—մինչև Պէյ-  
 լանցի պարսն թորս Սահակեանք սրնց յիշատակին  
 չես խղճացած ձօնել Մեսրոպեան տառերու գիւտէն ի  
 վեր քի զյա տեսած ամէնէն խեղճուկրակ գրութիւնը:

Վերջակէտ մը հասկ զաստուք գէլդի թատերաբեմ  
 Աւա՞ղ, ծանօթ քիւրտ Մուսա պէյ այնչափ հայ  
 ջարդած չէր որչափ Աղաթի պիցազներգոյ Մուսան  
 ջարդած է, այս գիրքին մէջ, հայ լեզուն, տալաշափու-  
 թիւնը, ներգաշնակութիւնն ու ճաշակը, իրենց յարս  
 կից մանրամասնութիւններով:

Բանաստեղծական արուեստին վրայ գաղափար մը  
 առլու համար միջանդ կը բերենք բանի մը օրինակներ:  
 Ճոշտիկեցէր հետեեալ ճոխ յանդերգը.

Ա. Լ մեզ ծաղրել չի պիտի կրնաք  
 Երազան մեզի կայնած է կունակ:»

Պէտք է որ նապարը ձգէ իր զանակ  
 եւ երթայ անձնատուր ըլլալ մեր բանակ:

Բարեւ ձեզ մեծարգոյ խլամ քեդիներ  
Անվախ մօտեցէ՛ք չէք ըլլար գերիներ :

Ձմեզ հասցոց շատ աղէկ տուր  
Մեզ ալ կանչեց նաեւ կեալուր :

Առէ՛ք եւ կերէ՛ք հիսակ սղորմելիութիւնն սա յան-  
դերուն .

Դուք որ պատկեցաք անթող ու անփայլ  
Մեծ հիք հոգեւլ մաքուր լուսափայլ :

Ես ձեզ կը ձօնեմ աննման քաջեր  
Քաջեր եղական. վեհագի քաջեր :

Պիտի կռուիմ ես Թուրքի դէմ մինչ վերջ  
Մեր ասնջանքներուն տալու համար վերջ :

Ի սպաս ջնջել անհաւատոր  
Մեր միակ ուխտն է ու հաւատոր :

Այդ ի՞նչ ցնորք, ի՞նչ միտք խորէպատիր  
Որ նոր սերունդին գլուխն է պատեր .

Աքոսցի առեող գայլին ու սրջին .  
Կարծիքս է երթալ միշտ Թուրքի ջրին .

Յանձնեցին շուտ մ իրենց արիւնավախ սուր ,  
Կատարի ակնարկին առջեւ խիստ ու սուր .

Քանի այսպէս անմեղ զոհեր  
Իրենց յոյսն ու երազ սղօւէն են զոհեր

Կործան շին օր մայրամսն ստեղծի մեծ օմիր,  
 Հալու ժր անդ աստ թո՛ւրք կտորեցին իբր ո՛չիչ:

Չեղբե կ'իյնայ ա՛լ հրացա՛նս,  
 Ու կը քաշու՛նի նահ ձայնս:

Չի մոռանը մնր կարգալ նոս հոգեհանդիստ  
 Այս էրիս քաջին որ պատկո՛ւմ են հանգիստ:

Երբեմն, մեծ բանաստեղծներու հանդու՛նափոյ, պ.  
 Աղասի հայ լեզուն կը ջարդէ իբրև մասազ բանաստեղծ  
 տաճիկ զանգի ժը անընդունելի և ձյ՛մահաշարժ պահանջ  
 Գումեհրուն: Ավտո՛ս, այս մասին ո՛չ օրինակները, ո՛չ  
 տարօրինակները և ո՛չ իսկ անօրինակները կը պակսին:  
 Ը՛մբողջունեցէ՛ք.

Առաջինը չէ այս մեր կռիւի  
 Ո՞՞՞՞ չունի՛ մեր մէջ ութ վերք իր թևին:

Հացի տեղ կերաք Պրիսէն խոտեր  
 Բայց թուրքը ձեզ բանս չկրցաւ խօթեր:

Եթէ կ'ուզէք ըիչ մըն ալ պ. Աղասիի բերթոգա-  
 ցան ներշնչումին համը նայինք: Տեսնենք իր յղացած  
 պատկերները, իր փոխաբերութիւնները, նմանութիւնները,  
 ևն, ևն: Ահա առիկ պատկեր ժը որուն ո՛չ թեթևութիւնը  
 և ո՛չ ալ տեսակ ժը հերոսական յանդգնութիւն կը պակսի:

Միշտ բու պաւտղի՛րքէ բայց ի՞նչ խենթ փառի  
 Նազարէթ, սրտիզ մէջը կը սահի:

Եւ սա զմայելի տողը ուր կոյսի մը երիտասարդ  
թարմութիւնը կը խտանայ .

Եւ զո՛ւն գանձ (1) թարմութեան :

Հապա՛ սա սիրային տողերը .

Ո՛վ իմ սիրական տիպար սիրո՛հի

Դուն իմ Պէրիտի վայրի պիցուհի

Թէ մերկ գրկեմ ընդ վերնն այս սարի

Կը զառնայ ինձ ձմեռն ամառի :

Բայց եթէ բաւական կուշտ ու կուռ խնդացիք,  
ձեր ակործակէն մաս մը, և մեծագոյնը, պահեցէք զայլ  
շարժումն ուր Զուարթութեան սեղանը նորէն պիտի  
սարքենք աւելի համազամ և անակնկալ խորտիրոներով,  
պանդաներով, գունագեղ պտուղներով :

### ՍՏՈՒԳՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ ԼՈՒՐԵՐ

Առաջնորդարանի կէս պաշտօնական շրջա-  
նակներուն մէջ զրոյց կը շրջի թէ վսեմ. Բար-  
թող փաշա որոշած է եկեղեցւոյ սնտուկը և  
տետրակները չյանձնել նոր վարչութեան : Նո-  
րին վսեմութիւնը պիտի սպասէ ապօրէն մարմ-  
նոյ մը վերստին հաստատման սնտուկ և տետ-  
րակ յանձնելու համար :

1. Եթէ կարենայինք, ժողովրդական ասացուած-  
քին համեմատ, «տանձ» հասկնալ, զոնէ իմաստ մը  
կունենար տողը :

Հաւաստի ազբիւրի մը նայելով վազը, կիրակի, առտուան ժամը 10ին Ալեքսանդրիա կը հասնի վահրամ վրդ. Ազարեան. Ընտրոյական ժողովը յատկապէս հեռագրով հրաւիրած է նորին արժանապատուութիւնը որպէսզի քրէկներու կարգայ, տեղոյս եկեղեցականները միահամուռ մերժած ըլլալով կարգաւ 800ի շափրուէթուզթներու 18 անունները, այսինքն մատուորապէս 14400 սնուն և մականուն:

Մեծանուն վարեարանագէտ Տ. Աստուր պէյ Շէրիտեան նկատելով որ քիչ ատենէն, ցաւօք սրտի պիտի պարտաւորուի Պօլոսեան համալսարանէն հեռանալ, որոշիր է Պազար Իւնիվէրսէլէն տուփ մը կապարէ խազալիք փոքր սոգաք ծախու առնել և իր տան հաւնոցն ալ մաքրելով, մանրագիտական գրասեղաններով, բարետախտակներով և աշխարհագրական քարտէսներով կահաւորել և փայտի կտորներով զասարաններու բաժնել և այսպէս հաւնոց վարժարան մը ունենալ իր տունը, որուն մշանջենական հոգաբարձուն ըլլայ ինք:

Իր փոքրիկ շունը, Ժօլի, անտես ազբօր պաշտօնը պիտի կատարէ. աքաղաղը իբր թէ տնօրէն պիտի ըլլայ և հաւերէն երկուքը՝ վարժուհի: Հաւերուն աժաժ հաւկիթները պիտի նկատուին իբրև զպրօցին ձեռագործական արդիւնքները:

Այս կերպով Տ. Աստուր պէյ կը յուսայ միշտ հոգաբարձու ըլլալու պատրանքը պահել:

## ՆՈՐ-ՔԱՐ

Արքանտինա՛վ երկու ազգաց մը ինչպե՛ս  
 Պրտակն իսպառ լուծուեցա՛ւ՝  
 Այսպե՛ս նաև Պահիրեցոց ի մեծ ցաւ,  
 Աղեքսանդրիա զատ տաւն կ'ըլլայ վերջնապե՛տ:

Տարիներէ ի վեր ի զո՛ր իրլանտա  
 Այս մեծ բազմին կը սպասէր.  
 Բարնէլի հորն ալ փորեցին կին և սէր.  
 Զը ձագեցա՛յ սահայն արեւ, Աքապա՛...:

Հաբհան՝ արքայ, (1) Հայկ՝ հոս, թեքու, նախապահ.  
 Բայց մինչ անկէն կաք արկն  
 Խորհրդաքան՝ հըս պէտք է նոր դեռ աբուն  
 Մենք հասցընենք մեր կանկաները հսկայ...:

Կ'օժտարիս վաղն, Աղեքսանդրիա՛ փառազարգ  
 Պինդ սխնեբով տաննեւթ.  
 Ո՛ր վեհ բաղար, մեռնի՛մ կիզիչ արեւոյ,  
 Ո՛ր այսբան սին պահած էիր մինչև ցարոյ:

«Եթէ սին են՝ շատ են... կ'ըսէր Տիգրան Բ՝.  
 «Իսկ եթէ քար՝ շատ քիչ են...»  
 Քար մը ինկաւ՝ ջախջախուելով բըրիչէն,  
 Պէտք է անշուշտ որ նոր բարեր մեզ կոփեն...»

(1) Նորվեկիոյ նոր թագաւորին անունն է Հաբն:



հայ գաղութին պարծոնքը կը կազմեն, այդ նոսի աստ-  
բազմիներու քով փայլած յարգանքովն յայտի կը բե-  
րին մեզի :

Ուրեմ յատահօրէն, առանց զեղենու, առանց շիւ-  
ռ պղտոր մարդոց խօսքին անսալու ձեր քօւնները սը-  
ւէք հետեեալ բարեհաձրաւ և պատու արժան անձնաւորա-  
թեանց .

- |                       |                         |
|-----------------------|-------------------------|
| 1. Արթն Ղուկասեան     | 10. Աստուր Բաժպակեան    |
| 2. Յարութիւն Կոճիկեան | 11. Սամիկ Գէշիկեան      |
| 3. Կարապետ Տափակեան   | 12. Մկրտիչ Ճինկեօզեան   |
| 4. Մինաս Սամիկեան     | 13. Սմբատ Արաս          |
| 5. Տոճատ Օտոնեան      | 14. Մարկոս Կոսմարեան    |
| 6. Միհրան Արազեան     | 15. Յովհաննէս Կերարբեան |
| 7. Յակոբ Կնախիկեան    | 16. Մասթոս Մերմերեան    |
| 8. Ստեփան Փանտեսեան   | 17. Ղուկաս Համբարեան    |
| 9. Գարրիկ Ճանճիկեան   | 18. Իգնատիոս Որոզինկեան |

### ՏՊԱԳԻՄԱԿԱՆ ՍԽԱԼԻ ՄԸ ՀԵՏԵՒԱՆՔԸ


Ամէն ազգի վարունգներէ բազկացած պատգամա-  
ւորութիւն մը ներկայանալով մեր խմբագրութեանը, ցա-  
լոյտանից նախորդ շաբթուան ԱԶԱՏ ԽՕՍՔԻ 61րդ երեսը,  
ստուգութեան կարօտ լորերու սկիզբը տեսնուած «Խփար  
Յ. Ուղտերեան» բառերուն համար: Պատգամաւորութեան  
պետր բացատրեց թէ վարունգներու սեռը չափազանց  
զգացած է և իրեն համար նախատինք մը կը համարի  
«Ուղտերեան» անուան հետ լուծորուած ըլլալը: Մենք

ձրրիք մտքերնն չկնք տնցոցած ամենախաբը շախով  
 նախատիլ համակրելի բանջարեղենները պոնց ազցանը  
 այնքան հանդերձ ճաշակելու բախար ունինք տարույս  
 այս Եղանակին մէջ Աքրի պարտք կը զգանք հրապա-  
 րակաւ յայտարարելու իմ այգ սողները պարզապէս ար-  
 պագրական սխալէ մը առաջ եկած են և թէ Խիաց  
 մեղուրեանը զետք է կարգաջ Տիագ Աւուրեան:

Կը յուսանք որ այս անկեղծ բացատրութիւնը պի-  
 տի հանդարտեցնէ վարունգեանց յուզեալ մտքերը:

### ՎԵՐՉԻՆ ԺԱՄ

Թերթը մամուլի տակ գրուած բո-  
 պէին յանկարծ խիտա վաւերական  
 աղբիւրէ մը իմացանք թէ որ և է  
 կարեւոր լուր կամ իրողութիւն չի կայ  
 մեր ընթերցողներուն հաղորդելու, ուս-  
 տի անմիջապէս հրամանն տուինք թեր-  
 թին տպագրութիւնը շարունակելու:



“ ԱԶԱՏ ԽՕՍԲ ,, ՁԵՌԻԷ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Աւերջանդրիայ՝ Տ. Յ. Ղազիկեանի քով և Շէրիֆ  
 փաշա լրագրավաճառ Տ. Թեյլալեանի խանութը.

Գահիրէ՝ լրագրավաճառ Տ. Հոնկի և Կոլտըն ֆեռչքի  
 քով և « Լուսաբեր » թերթի ցրութիւն մօտ:

Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կրկին  
 գինով:

“ ԱԶԱՏ ԽՕՍԲ ”, Ի Պայմանները

- ԱԶԱՏ ԽՕՍԲ - ԿԸ շՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՄԲՍՑ ՕՐԵՐԸ

Եզիպտոսի համար բաժնեգրին է

40 ՔԻԻԸ	40 ՂՐԵ. ՈՂԶ
20 ”	20 ” ”

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵՒՐՈՊԱ	40 ՔԻԻ	10 ՅՐԱԼՔ
ՌՈՒՍԻԱ	” ”	4 ՐՈՒՊԼԻ
ԱՄԵՐԻԿԱ	” ”	2 ՏՈՒՐ

Բաժանորդագրուիքները կանխիկ

ՉԱՏԸ 1 ՂՐԵ. ՈՂԶ

“ ԱԶԱՏ ԽՕՍԲ ”, Ի համար բաժնեգրին կամ  
որ և է գրուածին պէտք է ուղղել հե-  
տևեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, ( EGYPTE )

Մանուգրուներ կրկնուունին մասնաւոր  
պայտաններով:

Պատասխանատու - Խաբաբի Ե. ՕՏԵԱՆ

Տպգր. Փնրգր. Գ ՆԱԶԱՐԵԹԵԱՆ Ալեքսանդրիա